Սերգեյ Դովլաթով

Մերոնք

5

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Կյանքը մորաքրոջս որդուն քրեական հանցագործ է դարձրել: Ինձ թվում է, նրա բախտը բերել է: Այլապես անխուսափելիորեն դառնալու էր խոշոր կուսակցական աշխատող:

Դրա համար առկա էին բազում տարաբնույթ նախապայմաններ: Սակայն առաջ չընկնենք...

Մորաքույրս հայտնի գրական խմբագիր էր: Նրա ամուսինը՝ Արոնը, զինվորական հոսպիտալ էր ղեկավարում: Դրանից զատ՝ դասախոսություններ էր կարդում ու նամականիշներ հավաքում: Դա համերաշխ, լավ ընտանիք էր...

Ավագ եղբորս ծնունդը պարուրված է առեղծվածով: Մինչև ամուսնանալը մորաքույրս սիրավեպ է ունեցել: Նա սիրում էր Սերգեյ Միրոնովիչ Կիրովի տեղակալին: Անունը՝ Ալեքսանդր Ուգարով: Տարեց լենինգրադցիները հիշում են այդ երևելի մարզկոմական գործչին:

Ուգարովն ընտանիք ուներ: Իսկ մորաքրոջս սիրում էր ընտանիքից զատ:

Եվ մորաքույրս հղիանում է:

Մոտենում է ծննդաբերելու ժամանակը: Նրան հիվանդանոց են տանում:

Մայրս գալիս է Սմոլնի: Համառությամբ հասնում է ընդունելության: Կիրովի տեղակալին հիշեցնում է քրոջ ու նրա պրոբլեմների մասին:

Ուգարովը խոժոռ դեմքով ինչ-որ հրահանգներ է տալիս: Մարզկոմականները շարքով ծաղիկներ ու միրգ են տանում ծննդատուն: Մորաքրոջս տուն են բերում նախշազարդ թղթախաղի սեղան: Հավանաբար՝ դասակարգայնորեն խորթ տարրերից բռնագրավված:

Մորաքույրս ծնում է առողջ ու սիրունատես տղա՝ Բորյային: Մայրս կրկին որոշում է գնալ շրջկոմ: Ընդունելությունը չի կայանում: Ոչ թե այն պատճառով, որ Ուգարովը չի ուզում: Այդ օրերի ընթացքում երջանիկ հորը ձերբակալում են որպես ժողովրդի թշնամի:

Երեսունութ թվականն էր... Մորաքույրս մնում է երեխայի հետ: Լավ է, որ Ուգարովը նրա ամուսինը չէր: Այլապես մորաքրոջս էլ կաքսորեին: Իսկ այդպես՝ աքսորում են Ուգարովի կնոջն ու երեխաներին: Ինչը, անշուշտ, նույնպես տհաճ է:

Մորաքույրս, ինչպես երեւում է, գիտեր, թե ինչ է անում: Նա գեղեցիկ, եռանդուն ու անկախ կին էր: Եթե անգամ վախենում էր, ապա՝ միայն կուսակցական քննադատությունից . . .

Հետո հայտնվում է Արոնը: Նա, երեւի, սիրում էր մորաքրոջս: Առաջարկում է ձեռքն ու սիրտը:

Արոնը գլխարկների արհեստանոցի տիրոջ որդին էր: Հրեայի, սակայն՝ կարճատես, վտիտ ու մտածկոտ, նման չէր: Արոնը բարձրահասակ, ուժեղ, արի տղամարդ էր: Նախկինում՝ հեղափոխական ուսանող, կարմիրբանակային ու նէպման: Եվ վերջապես, տարիքն առնելուց հետո՝ ռեւիզիոնիստ եւ այլախոհ . . .

Արոնը աստվածացնում էր մորաքրոջս: Երեխան նրան «պապա» էր ասում . . .

Սկսվեց պատերազմը: Հայտնվեցինք Նովոսիբիրսկում: Լրացավ Բորյայի երեք տարին: Մակապարտեզ էր գնում: Ես ծծկեր էի:

Բորյան ինձ համար ռաֆինադի կտորներ էր բերում: Պահում էի բերանում: Իսկ տանը հանում, դնում էր ափսեին:

Ես լալիս էի, չէի ուտում շաքարը: Բորյան տագնապով ասում էր մեր ծնողներին .

— Ախր շաքարը հալվում է . . .

Հետո պատերազմը վերջացավ: Այլեւս սոված չէինք մնում . . .

Եղբայրս արեւմտաեվրոպական տիպի գեղեցիկ պատանի էր: Բաց գույնի աչքեր ուներ ու մուգ մազեր: Հիշեցնում էր առաջադեմ իտալական կինոյի պատանի հերոսներին: Այդպես էր համարում մեր ողջ բարեկամությունը . . .

Ցուցադրական սովետական տղա էր: Պիոներ, գերազանցիկ, ֆուտբոլիստ ու մետաղի ջարդոն հավաքող: Օրագիր էր պահում, ուր արտագրում էր իմաստուն ասույթները: Իրենց բակում կեչի տնկեց: Դրամատիկական խմբակում նրան հանձնարարում էին երիտասարդգվարդիականների դերեր . . . .

Ես ավելի փոքր էի, ամաչկոտ ու կարդացած: Ինձ ասում էին՝ Բորյան լավ է սովորում, օգնում է ծնողներին, զբաղվում է սպորտով . . . Բորյան հաղթել է շրջանային օլիմպիադայում . . . Բորյան բուժել է վիրավոր թռչնակին . . Բորյան հավաքել է դետեկտորային ռադիոընդունիչ: (Մինչեւ օրս չգիտեմ, թե դա ինչ է նշանակում) . . .

Եվ հանկարծ տեղի ունեցավ աներևակայելին... Աննկարագրելին... Պարզապես բառեր չեմ գտնում...

Կարճ ասած, եղբայրս միզեց դպրոցի տնօրենի վրա:

Դա տեղի է ունենում դասերից հետո: Բորյան ֆիզկուլտուրնիկի օրվա կապակցությամբ պատի թերթ է պատրաստելիս լինում: Կողքին՝

համադասարանցիներն էին:

Լոաամուտից դուրս նայելով, նրանցից մեկն ասում է.

— Մատնիչը գնաց...

(Մատնիչ աշակերտներն իրար մեջ անվանում էին դպրոցի տնօրեն Չեբոտարյովին):

Եղբայրս բարձրանում է լուսամուտի գոգին: Աղջիկներին խնդրում է շրջվել: ճշգրիտ հաշվարկում է հետագիծը: Ու ոտից գլուխ ցնցուղում է Չեբոտարյովին...

Արարքն աներևակայելի էր ու վայրենի: Դրան անհնար էր հավատալ: Դեպքից մեկ ամիս անց ներկաներից շատերն անգամ կասկածում էին, թե դա իրոք տեղի է ունեցել: Այդքան հրեշավոր էր կատարվածը:

Չեբոտարյովի արձագանքն էլ խիստ անսպասելի էր: Նա բացարձակապես կոցրնում է իր դեմքը: Սկսում է գորգոռալ ճամբարային գողական լեզվով.

— Քեզպեսներին զոնայով մեկ չորեքթաթ եմ վազեցրել... Քաքակեր լակոտ...

Տնօրեն Չեբոտարյովի մեջ արթնանում է ճամբարային վերակացուն: Ո՞ւմ մտքով կանցներ: Կանաչ ֆետրե գլխարկ, չինական բաճկոն, թղթերով լի պորտֆել...

Եղբայրս դա արել էր դպրոցն ավարտելուց մեկ շաբաթ առաջ: Դրանով իսկ ինքն իրեն զրկելով ոսկե մեդալից: Ծնողները դժվարությամբ են կարողանում համոզել տնօրենին, որ Բորյային հասունության վկայական տա...

Այն ժամանակ հարցրի եղբորս.

— Ինչո՞ւ արեցիր դա: Եղբայրս պատասխանեց.

— Ես արեցի այն, ինչի մասին հոգու խորքում երազում է ամեն մի դպրոցական: Տեսնելով Մատնիչին, հասկացա՝ հիմա կամ երբեք: Կամ կանեմ, կամ կդադարեմ ինքս ինձ հարգելուց...

Այդ ժամանակ արդեն բավական նենգամիտ պատանի էի: Եղբորս ասացի.

— Ձեր դպրոցի ճակատին հարյուր տարի հետո հուշաքար կկպցնեն . «Այստեղ կկպցնեն Բորիս Դովլաթովը . . . դրանից բխող անակնկալ հետեւանքներով» . . .

Եղբորս արարքի մասին խոսում էին մի քանի ամիս շարունակ: Հետո Բորիսն ընդունվեց թատերական ինստիտուտ: Որոշել էր դառնալ արվեստագետ: Նրա հանցագործությունն աստիճանաբար մոռացվեց: Մանավանդ որ՝ սովորում էր գերազանց: Կոմերիտական կազմակերպության քարտուղարն էր: Ինչպես նաեւ՝ դոնոր, պատի թերթի խմբագիր ու դարպասապահ . . .

Առնականացավ ու ավելի գեղեցկացավ: Նմանվեց իտալացի կինոդերասանի: Աղջիկները նրան սիրահետում էին անսքող ոգեւորությամբ:

Դրանով հանդերձ, առաքինի ու ամաչկոտ երիտասարդ էր: Զզվում էր կանացի սեթեւթանքից: Հիշում եմ, ուսանողական տարիներին իր օրագրում գրել էր . «Գրքի ու կնոջ մեջ կարեւորը ոչ թե ձեւն է, այլ բովանդակությունը» . . .

Հիմա անգամ՝ անհաշիվ հուսախաբություններից հետո, այդ կանխադրույթն ինձ առաջվա պես ճանճրալի է թվում: Առաջվա պես ինձ դուր են գալիս միայն գեղեցիկ կանայք:

Ավելին՝ նախապաշարմունքներ ունեմ: Ինձ թվում է, օրինակ, որ բոլոր գեր կանայք ստախոս են: Հատկապես՝ եթե գիրության հետ մեկտեղ փոքր կուրծք ունեն . . .

Խոսքը, սակայն, իմ մասին չէ . . .

Եղբայրս ավարտում է թատերական ինստիտուտը: Գերազանցության դիպլոմով: Անթերի կոմերիտական բնութագրով:

Խոպանը բարձրացնողներից էր ու շինջոկատների հրամանատար: Միլիցիային աջակցող ջոկատի ակտիվիստ: Մարդկանց գիտակցության մեջ քաղքենիական տրամադրությունների ու կապիտալիզմի մնացուկների անհաշտ թշնամի:

Նրա աչքերն ամենաազնիվն էին իրենց թաղամասում . . .

Դարձավ գրական մասի վարիչ: Աշխատում էր Լենինյան կոմերիտմիության անվան թատրոնում: Դա անհավանական հաջողություն էր: Այդքան երիտասարդ, ուսանողական նստարանից նոր ելած եւ՝ հանկարծ այդպիսի պաշտոն . . .

Գրական մասի վարիչի իր պաշտոնում խստապահանջ էր ու գործնական: Պայքարում էր հանուն առաջադեմ արվեստի: Ընդ որում՝ զուսպ ու շրջահայացորեն: Հմտորեն բեմ էր բարձրացնում Վամպիլովին, Բորշչագովսկուն, Մրոժեկին . . .

Վաստակավոր սովետական դրամատուրգները զգուշանում էին նրանից: Նրանով հիանում էր ըմբոստ թատերական երիտասարդությունը:

Նրան վստահում էին ամենապատասխանատու գործուղումները: Մի քանի անգամ մասնակցել էր Կրեմլում հրավիրված խորհրդակցությունների: Նրբանկատորեն առաջարկում էին կուսակցության շարքերն ընդունվել: Ինքը տատանվում էր: Իրեն թվում էր, թե արժանի չէ...

Եվ հանկարծ եղբայրս կրկին աչքի է ընկնում: Չգիտեմ անգամ, թե ինչպես ձևակերպեմ... Մի խոսքով, Բորյան տասներկու կողոպուտ է կատարում:

Ինստիտուտում Ցապին ազգանունով ընկեր ուներ: Հենց այս Ցապինի հետ էլ կողոպտում են տասներկու արտասահմանյան տուրիստական ավտոբուսներ: Տանում են ճամպրուկներ, ռադիոընդունիչներ, մագնիտոֆոններ, հովանոցներ, անձրևանոցներ ու գլխարկներ:

Նրանց ձերբակալում են հաջորդ օրը: Բոլորս ցնցված էինք: Մորաքույրս վազում է իր ընկեր Յուրի Գերմանի մոտ: Նա զանգում է իր ընկերներին՝ միլիցիայի գեներալների:

Դատի ժամանակ եղբորս պաշտպանում էր քաղաքի լավագույն փաստաբանը՝ Կիսելյովը:

Դատավարության ընթացքում երևան եկան որոշ պարագաներ ու մանրամասներ: Պարզվեց, որ կողոպուտի զոհերը զարգացող երկրների ներկայացուցիչներ էին: Ինչպես նաև՝ առաջադեմ սոցիալիստական կազմակերպությունների անդամներ:

Կիսելյովը որոշեց օգտվել դրանից: Եղբորս հարցրեց.

— Ամբաստանյալ Դովլաթով, դուք գիտեի՞ք, որ այդ մարդիկ զարգացող երկրների քաղաքացիներ են: Ինչպես նաև՝ սոցիալիստական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

— Ցավոք, չգիտեի, — խելամտորեն պատասխանեց եղբայրս:

— Իսկ եթե իմանայի՞ք... Այդ դեպքում կկողոպտեի՞ք նրանց անձնական ունեցվածքը:

Եղբորս ամբողջ կեցվածքը ծայրաստիճան վիրավորանք արտահայտեց: Փաստաբանի հարցը բացարձակապես անկիրթ համարեց: Հիսաթափված բարձրացրեց հոնքերը, ինչը նշանակում էր՝ «Եվ դեռ հարցնում էլ ե՞ք: Ինչպե՞ս կարող եք մտածել անգամ այդ մասին»...

Կիսելյովը նկատելիորեն աշխուժացավ:

— Պարզ է, — ասաց: — Իսկ հիմա վերջին հարցը: Ձեզ չէ՞ր թվացել արդյոք, որ այդ պարոնները հասարակության ռեակցիոն խավերի ներկայացուցիչներ են . . .

Դատավորն այստեղ ընդհատեց նրան .

— Ընկեր Կիսելյով, պետք չէ ամբաստանյալին ներկայացնել որպես համաշխարհային հեղափոխության մարտիկ:

Եղբայրս, սակայն, հասցրել էր գլխով անել: Իբր՝ այո, ինձ այդպես էլ թվաց . . .

Դատավորը ձայն բարձրացրեց .

— Դուրս մի եկեք հետաքննության տրամադրած փաստերի շրջանակից . . .

Եղբորս երեք տարի տվին:

Դատարանում արի ու պարզ կեցվածք ուներ: Ժպտում էր ու հեգնում դատավորին:

Երբ կարդացին դատավճիռը, եղբայրս անգամ չցնցվեց: Նրան տարան դատարանի դահլիճից:

Հետո բողոքարկեցինք . . . Հեռախոսազանգեր, այցելություններ, բանակցություններ: Բոլորն ապարդյուն:

Եղբայրս հայտնվեց Տյումենում: Ուժեղացված ռեժիմի ճամբարում: Նամակագրական կապի մեջ էինք: Եղբորս բոլոր նամակները սկսվում էին «Ամեն ինչ կարգին է» բառերով . . .

Հետեւում էին բազմաթիվ, սակայն զուսպ ու սթափ խնդրանքներ . «Երկու զույգ բրդյա գուլպա . . . Անգլերենի ինքնուսույց . . . Տաք անդրավարտիք . . . Ընդհանուր տետրեր . . Գերմաներենի ինքնուսույց . . . Սխտոր . . . Կիտրոն . . . Ինքնահոս գրիչներ . . . Ինչպես նաեւ կիթառի ինքնուսույց» . . .

Ճամբարից միանգամայն լավատեսական տեղեկություններ էին ստացվում: Ավագ դաստիարակ Բուկինը գրում էր մորաքրոջս .

«Բորիս Դովլաթովը անշեղորեն հետեւում է ճամբարային ռեժիմի բոլոր պահանջներին . . . հեղինակություն է վայելում կալանավորների շրջանում . . . Սիստեմատիկաբար գերակատարում է աշխատանքային հանձնարարությունները . . . Ակտիվ մասնակցություն է ցուցաբերում գեղարվեստական ինքնագործունեության աշխատանքներին» . . .

Եղբայրս գրում էր, որ իրեն նշանակել են հերթապահ: Հետո՝ բրիգադիր: Եվ վերջապես՝ բաղնիքի վարիչ:

Դա գլխապտույտ կարիերա էր: Ճամբարում շատ դժվար է դրան հասնել: Ազատության մեջ գործադրված համարժեք ջանքերը հասցնում են բյուրոկրատական սանդղակի բարձունքներին: Հատուկ մատակարարման,

ամառանոցների ու արտասահմանյան ուղևորությունների...

Եղբայրս սրընթաց վերադաստիարակվում էր: Նա ճամբարի փարոսն էր: Նրան նախանձում էին, նրանով հիանում էին:

Մեկ տարուց նրան փոխադրեցին ազատ աքսորի: Տեղի քիմիական կոմբինատում աշխատելը պարտադիր էր:

Այդտեղ ամուսնացավ: Նրա մոտ մեկնեց ինքնազոհ համակուրսեցի Լիզան: Ինչպես դեկաբրիստների կանայք: Նրանք այլևս այր ու կին էին..

Իսկ ինձ այդ ընթացքում վռնդեցին համալսարանից: Հետո բանակ տարան: Ծառայում էի ներքին զորքերում: Դարձա ճամբարային վերակացու:

Այնպես որ ես վերակացու եմ եղել, իսկ Բորյան՝ կալանավոր:

Ես անգամ եղբորս վերակացուն եմ եղել, ճիշտ է՝ կարճ ժամանակով: Այդ մասին չեմ ուզում պատմել: Շատ գրական կստացվի: Ինչպես Շոլոխովի «Դոնի պատմվածքներում»:

Այսքանը բավական է. ես վերակացու եմ եղել, իսկ եղբայրս՝ կալանավոր...

Վերադարձանք գրեթե միաժամանակ: Եղբորս ազատեցին, ես զորացրվեցի:

Մեր ազգականները շքեղ ճաշկերույթ կազմակերպեցին «Մետրոպոլ»–ում: Մեծարում էին, հիմնականում եղբորս: Ինձ էլ, սակայն, հիշատակում էին:

Ռոման քեռիս, օրինակ, այսպես արտահայտվեց.

— Կան մարդիկ, որոնք նման են սողունների: Ապրում են ճահճում... Եվ կան մարդիկ, ովքեր ապրում են լեռնային արծիվների պես: Նրանք արևից բարձր են սավառնում՝ լայնորեն տարածելով թևերը... Խմենք Բորյայի կենացը, մեր լեռնային արծիվի կենացը... Խմենք, և թող ամպերը մնան հետևում...

— Բռավո, — բացականչում էին մեր ազգականները, — արծիվ, ջիգիթ...

Քեռուս ճառում որսացի Գորկու «Երգ Բազեի մասին»–ը... Ռոման քեռիս փոքր-ինչ ավելի ցածր ձայնով ավելացրեց.

— Խմենք նաև Սերյոժայի կենացը, մեր արծվիկի կենացը: Նա, ճիշտ է, դեռ երիտասարդ է, թևերը դեռ չեն ամրացել: Բայց նրան էլ մեծ թռիչքներ են սպասում...

— Աստված չանի, — բավական բարձր ասաց մայրս:

Քեռիս կշտամբալի հայացքով նայեց մորս . . .

Մորաքույրս նորից զանգեց տարբեր մարդկանց: Եվ եղբորս ընդունեցին Լենֆիլմ: Կարծեմ լուսավորող նշանակեցին:

Իսկ ես ընդունվեցի բազմատիրաժ թերթ: Հետո էլ սկսեցի պատմվածքներ գրել . . . .

Եղբորս կարիերան սկսեց թափ առնել: Շուտով լաբորանտ դարձավ: Հետո՝ դիսպետչեր: Հետո՝ ավագ դիսպետչեր: Եվ վերջապես՝ կինոնկարի դիրեկտորի տեղակալ: Այսինքն՝ նյութական պատասխանատու անձ:

Ջուր չէր եղբայրս ճամբարում այդքան սրընթաց ուղղվում: Հիմա, երեւի, չէր կարողանում կանգ առնել . . .

Մեկ ամիս անց նա լուսանկարն արդեն Պատվո տախտակին էր: Նրան սիրեցին ռեժիսորները, օպերատորները եւ անձամբ Լենֆիլմի տնօրեն Զվոնարյովը: Ավելին՝ նրան սիրեցին հավաքարարները . . .

Նրան խոստացել էին մոտ ապագայում ինքնուրույն կինոնկար վստահել:

Լենֆիլմի տասնվեց հին կոմունիստներ պատրաստ էին երաշխավորություն տալ եղբորս՝ կուսակցության շարքերն ընդունվելու: Եղբայրս, սակայն, երկմտում էր:

Հիշեցնում էր Լեւինին «Աննա Կարենինա»-ից: Լեւինն ամուսնության նախօրեին ամաչում էր երիտասարդ տարիներին կուսությունը կորցրած լինելու համար:

Նույն մտքերը նաեւ եղբորս էին տանջում: Այն է՝ կարո՞ղ է կոմունիստը քրեական անցյալ ունենալ:

Հին կոմունիստները հավատացնում էին, թե կարող է . . .

Եղբայրս շահեկանորեն աչքի էր ընկնում կինոստուդիայի տաղտուկ մթնոլորտում: Նա ուրախ էր, շարժուն ու քչախոս: Նրան վստահում էին պատասխանատու գործուղումները: Բլորը համոզված էին, որ փայլուն բյուրոկրատական կարիերա է անելու: Այլեւս անհավատալի էր, թե բանտ է նստել: Ոչ մոտիկ ծանոթներից շատերը կարծում էին, թե բանտ ես էի նստել . . .

Ու կրկին ինչ-որ բան տեղի ունեցավ: Այս անգամ ոչ թե կտրուկ, այլ աստիճանաբար: Ինչ-որ տարօրինակ ընդհատումներ ի հայտ եկան: Կարծես սաքսաֆոնի խռպոտ ձայնը խախտում էր «Ապասիոնատայի» հանդիսավոր հնչյունների հերթականությունը:

Եղբայրս շարունակում էր կարիերա անել: Ժողովներին ելույթներ էր ունենում: Մեկնում էր գործուղումների: Միաժամանակ, սակայն, երբեմն խմում էր: Ու սիրահետում կանանց: Այն էլ անակնկալ խանդավառությամբ:

Նրան սկսեցին տեսնել կասկածելի մարդկանց հետ: Նրան շրջապատում էին հարբեցողներ, ֆարցովշչիկներ, Խալխին-Գոլի ինչ-որ անհայտ վետերաններ:

Սթափանալով, վազում էր ժողովների: Հաջողությամբ ավարտելով ելույթը, շտապում էր ընկերների մոտ:

Սկզբում այդ ճանապարհները չէին հատվում: Եղբայրս կարիերա էր անում ու միաժամանակ կործանում այն:

Օրերով տանը չէր երևում: Անհետանում էր ինչ-որ վատշվեր կանանց հետ:

Այդ կանանց մեջ գերակշռում էին տգեղները: Նրանցից մեկի անունը, հիշում եմ, Գրետա էր: Այս Գրետան զոբ ուներ:

Եղբորս ասացի.

— Կարող էիր ավելի լավին գտնել:

— Գեղացի, — վրդովվեց եղբայրս, — իսկ գիտես, որ նա սպիրտ է ստանում աշխատանքի վայրում: Անսահմանափակ քանակությամբ...

Հավանաբար եղբայրս դեռևս ղեկավարվում էր պատանեկան հայեցակարգով՝ «Կնոջ ու գրքի մեջ գլխավորը ոչ թե ձևն է, այլ բովանդակությունը»:

Հետո եղբայրս ծեծեց մատուցողին «Նարվա» ռեստորանում: Պահանջել էր, որ մատուցողը «Սուլիկո» երգի...

Սկսեց միլիցիա ընկնել: Ամեն անգամ նրան այնտեղից հանում էր «Լենֆիլմի» բյուրոն: Բայց՝ ավելի ու ավելի դժկամությամբ:

Սպասում էին, թե դա ինչով է ավարտվելու...

Ամռանը եղբյարս մեկնեց Չիտա՝ «Դաուրիա» ֆիլմի նկարահանումներին: Ու հանկարծ իմանում ենք, որ նա պետական մեքենայով մարդ է վրաերթի ենթարկել: Այն էլ՝ Խորհրդային բանակի սպայի: Այն էլ՝ մահացու ելքով...

Ենթադրությունների ու գուշակությունների սոսկալի ժամանակ էր: Մեզ հասնող տեղեկությունները հակասական էին: Ասում էին, թե Բորյան մեքենան հարբած է վարել: Ասում էին միաժամանակ, որ սպան էլ սթափ չի եղել: Թեև դա նշանակություն չուներ, քանի որ նա մահացել էր...

Մորաքրոջիցս այդ ամենը թաքցնում էինք: Քեռիս ու մորքրայրերս մոտ չորս հարյուր ռուբլի հավաքեցին: Չիտա պետք է գնայի ես՝ մանրամասներն իմանալու եւ խելամիտ գործողություններ ձեռնարկելու: Բորյային ծանրոցներ ուղարկել, փաստաբան վարձել . . .

— Եվ եթե հնարավոր է՝ կաշառել քննիչին, — անընդհատ հիշեցնում էր Ռոման քեռիս:

Սկսեցի պատրաստվել:

Գիշերն արթնացա հեռախոսի զանգից: Լռության միջից լսվեց եղբորս ձայնը .

— Քնա՞ծ էիր:

— Բորյա, — բացականչեցի: — Դու ո՞ղջ ես: Քեզ չե՞ն գնդակահարի: Հարբա՞ծ էիր . . .

— Ողջ եմ, — պատասխանեց եղբայրս, — ինձ չեն գնդակահարի . . . Եվ հիշիր՝ դա դժբախտ պատահար էր: Մեքենան վարում էի սթափ: Ինձ կտան չորս տարի, ոչ ավելի: Սիգարետները ստացա՞ր:

— Ի՞նչ սիգարետներ:

— Ճապոնական: Չիտան սեպարատ առեւտրական պայմանագիր ունի Ճապոնիայի հետ: Այստեղ գերազանց սիգարետներ են վաճառում՝ «Հայ լայթ»: Մի բլոկ ծնունդիդ նվեր եմ ուղարկել: Չե՞ս ստացել:

— Ոչ: Դա կարեւոր չէ . . .

— Ինչպե՞ս թե՝ կարեւոր չէ: Սքանչելի սիգարետներ են՝ ամերիկյան լիցենզիայով արտադրված . . .

— Քեզ կալանե՞լ են, — ընդհատեցի ես:

— Ոչ, — ասաց, — ինչի՞ համար: Ապրում եմ հյուրանոցում: Քննիչն ինձ մոտ է գալիս: Անունը Լարիսա է . . . Թմբլիկ է . . . Քեզ, ի դեպ, բարեւում է . . .

Լսափողից լսվեց կանացի ձայն .

— Կու-կու, ճուտիկս:

Հետո կրկին եղբորս ձայնը .

— Չիտա գալու կարիք չկա: Դատը, կարծում եմ, Լենինգրադում լինի . . . Մաման գիտի՞:

— Ոչ, — ասացի:

— Լավ է . . .

— Բորյա, — գոռում էի, — ի՞նչ ուղարկեմ: Դու, երեւի, սոսկալի վիճակում ես: Մարդ ես, ախր, սպանել . . .

— Մի գոռա: Սպաները նաեւ զոհվելու համար են ստեղծված . . . . Կրկնում եմ՝ դա դժբախտ պատահար էր... Լավ, բայց սիգարետներն ինչո՞ւ տեղ չեն հասել...

Շուտով Չիտայից եկան իրադարձության անմիջական մասնակիցներից երկուսը: Այդպես իմացանք գործի մանրամասները: Տեղի էր ունեցել, պարզվեց, հետևյալը:

Ինչ-որ մեկի ծննդյան օրն է եղել: Նշելիս են եղել բնության գրկում: Բորյան եկել էր արդեն երեկոյան՝ պետական մեքենայով: Ինչպես միշտ, խմիչքը պակասել է: Հյուրերը տխրել են: Խանութներն էլ արդեն փակ էին:

Բորյան հայտարարել է.

— Գնում եմ սամոգոն բերելու: Ո՞վ է գալիս հետս:

Քեֆը լավ է եղել: Փորձել են ետ պահել: Ի վերջո երեք հոգի հետը գնացել է: Այդ թվում մեքենայի վարորդը՝ հետևի նստարանին քնած:

Կես ժամ հետո բախվում են սպայի մոտոցիկլետին: Սպան մահանում է առանց գիտակցության գալու:

Ուղևորները խուճապի են մատնվում: Եղբայրս, ընդհակառակը, սթափանում է: Գործում է հստակ ու վճռական: Այն է՝ սամոգոն առնելու, այդուհանդերձ, գնում են: Բոլորին մի լավ խմեցնում է, այդ թվում փոքր-ինչ սթափված վարորդին: Սա նորից քնում է:

Դրանից հետո միայն եղբայրս զանգում է միլիցիա: Գալիս է օպերատիվ մեքենան: Հայտնաբերում են մեկ դիակ, մեկ ջարդուխուրդ եղած մոտոցիկլետ և

չորս հարբած մարդ: Ամենասթափը սրանցից եղբայրս է լինում:

Լեյտենանտ Դուդկոն հարցնում է.

— Վարորդն ո՞վ է:

Եղբայրս ցույց է տալիս քնած վարորդին: Սրան տանում են օպերատիվ մեքենայով: Մյուսներին տուն են հասցնում՝ գրելով հասցեները:

Եղբայրս երեք օր թաքնվում է: Մինչև օրգանիզմը մաքրվում է ալկոհոլից: Հետո մեղայականով գալիս է միլիցիա:

Վարորդը մինչ այդ, բնականաբար, նույնպես սթափվում է: Նրան պահել էին նախնական կալանքի խցում: Նա համոզված էր, թե հարբած ժամանակ մարդ է գցել մեքենայի տակ:

Այստեղ հայտնվում է եղբայրս ու ասում, որ ղեկին ինքն է եղել:

— Իսկ ինչո՞ւ ցույց տվեցիք Կրախմալնիկով Յուրի Պետրովիչին, — բարկանում է լեյտենանտը:

— Դու հարցրիք, թե ով է վարորդը, ես էլ պատասխանեցի...

— Իսկ ո՞ւր էիք կորել այս երեք օրը:

— Ես վախեցել էի . . . Ուշքի չէի գալիս . . .

Եղբորս դեմքի արտահայտությունն այդ պահին վկայում է իր փխրուն նյարդային համակարգի մասին:

— Դու վախեցող պտուղը չես, — չի հավատում լեյտենանտը:

Հետո հարցնում է .

— Դուք խմա՞ծ էիք:

— Երբեք, — անվարան պատասխանում է եղբայրս:

— Կասկածում եմ . . .

Որեւէ բան ապացուցել, սակայն, այլեւս անհնար էր: Ուղեկիցները երդվում էին, որ Բորյան չէր խմել: Վարորդն ընդամենը նկատողություն ստացավ աշխատավայրում:

Եղբայրս խելամիտ էր վարվել: Արդեն պիտի դատեին որպես սթափ վիճակում ղեկին եղածի: Ով պատճառ է դարձել դժբախտ պատահարի:

Քննիչ Լարիսան ասում էր նրան .

— Դու շարունակում ես խաբել հետաքննությանը անգամ անկողնում . . .

Մեկ շաբաթ անց Բորյան վերադարձավ Լենինգրադ:

Մորաքույրս արդեն տեղյակ էր: Չէր լալիս: Զանգում էր միլիցիայի հետ շփումներ ունեցող գրողներին: Նույն Յուրի Գերմանին, Մետտերին, Սապարովին:

Եղբորս այդ զանգերի շնորհիվ չէին անհանգստացնում: Մինչեւ դատը: Ընդամենը քաղաքից չբացակայելու ստորագրություն էին վերցրել:

Վերադառնալուց մի քանի օր հետո եղբայրս եկավ ինձ մոտ: Հարցրեց .

— Դու Լենինգրադի մերձակայքում ես ծառայել: Տեղի ճամբարների ցանցը լա՞վ գիտես:

— Ընդհանուր առմամբ, այո: Եղել եմ Օբուխովոյում, Գորելովոյում, Պիսկերյովկայում . . .

— Ինչ ես կարծում, ո՞ր ճամբարում նստեմ:

— Օբուխովոյում: Այնտեղ, իմ կարծիքով, ռեժիմը համեմատաբար մեղմ է:

— Մի խոսքով, հարկավոր է գնալ այնտեղ, տեղում ծանոթանալ . . .

Գնացինք Օբուխովո: Մտանք զորանոցը: Խոսեցինք հերթապահի հետ: Իմացանք ովքեր են մնացել գերժամկետ ծառայողներից: Քիչ անց վազելով զորանոց մտան Գոդերիձեն և Օսիպենկոն:

Գրկախառնվեցինք: Ծանոթացրի եղբորս հետ: Հետո պարզեցի, թե ովքեր են մնացել ճամբարի հին ղեկավարությունից:

— Կապիտան Դերյաբինը, — ասացին:

Կապիտան Դերյաբինին լավ հիշում էի: Համեմատաբար բարեհոգի, անհեթեթ հարբեցող էր: Կալանավորները թոցնում էին նրա սիգարետները: Իմ ծառայության ժամանակ Դերյաբինը մայոր էր:

Զանգեցինք զոնա: Գրեթե անմիջապես անցակետում երևաց Դերյաբինը:

— Օ-օ՛, — բացականչեց նա: — Սերյոժան է ժամանել: Տեսնեմ ի՞նչ ես դարձել: Լսել եմ, գրո՞ղ ես: Խնդրեմ, նկարագրիր կյանքից մի դեպք: Արտագնա կետից կալանավորներիցս մեկը կատապուլտով թռավ: Սանտեխնիկների բրիգադը տարել էի արտագնա կետում աշխատելու: Պահակներին շարեցի: Մի րոպեով հեռացա ջուր թափելու: Վերադառնում եմ կալանավորներից մեկը չկա: Թռել է... կեչին, հասկանում ես, ճկել են, մոնտաժային գոտիով կալանավորին կապել են ծայրին ու բաց են թողել: Կալանավորը գոտին արձակել ու թռել է: Մինչև համարյա երկաթուղային գծանցը: Հաշվարկներում, սակայն, մի փոքր սխալվել էր: Հուսով էր, թե ձյան վրա վայրէջք կկատարի գծանցի մոտերքում: Ընկել էր, սակայն, զինկոմիսարիատի բակը... Հա, զուտ գրական մի մանրամասն: Երբ բռնում էին՝ զինկոմիսարի քիթը կծել էր...

Դերյաբինին ծանոթացրի եղբորս հետ:

— Լյոխա, — ասաց կապիտանը, մեկնելով ձեռքը:

— Բոբ:

— Դե ինչ, — ասում եմ, — մի-մի թա՞ս...

Որոշեցինք խմել մոտակա անտառակում: Հրավիրեցինք նաև Գոդերիձեին ու Օսիպենկոյին: Պորտֆելից չորս շիշ «Զվերոբոյ» հանեցինք: Նստեցինք ընկած եղևնու բնին:

— Դե, թող բարին կատարվի, — ասացին բանտապահները: Հինգ րոպե անց եղբայրս արդեն գրկախառնվում էր Դերյաբինի հետ: Արանքում էլ հարցեր էր տալիս, ջեռուցումն ինչպե՞ս է, պահակակետերում քանի՞ շուն կա, պահպանվո՞ւմ են արդյոք բանտախցերը:

— Չես կորչի, — հավատացնում էին նրան Գոդերիձեն ու Օսիպենկոն:

— Լավ զոնա է, — կրկնում էր Գոդերիձեն, — կլցվես, կհանգստանաս, դյուցազն կդառնաս . . .

— Խանութն էլ մոտ է, — ավելացնում էր Օսիպենկոն, — գծանցի մոտ . . . Կարմիր էլ կա, սպիտակ էլ, գարեջուր . . .

Կես ժամ անց Դերյաբինն ասում էր .

— Տղերք, նստեք, քանի դեռ ողջ եմ: Թե չէ չի լինի Լյոխա Դերյաբինը, ու բոլորդ կքաշվեք . . . Կգան տարբեր գործիչներ անավարտ բարձրագույն կրթությամբ . . . Այն ժամանակ Լյոխա Դերյաբինին կհիշեք . . .

Բորյան գրեց նրա տան հեռախոսահամարը:

— Ինձ էլ քոնն ասա, — ասաց Դերյաբինը:

— Իմաստ չունի, — պատասխանեց եղբայրս, — մի ամսից գալու եմ . . .

Հետդարձի ճանապարհին ասաց .

— Առայժմ կարծես թե վատ չէ:

Իսկ իմ լացը գալիս էր: Երեւի «Զվերոբոյն» էր ազդել . . . .

Շուտով սկսվեց դատը: Եղբորս պաշտպանում էր նույն փաստաբան Կիսելյովը: Ներկաները բազմիցս նրա խոսքն ընդհատում էին ծափահարություններով:

Ուշագրավ է, որ, ըստ Կիսելյովի, իրադարձությունների զոհը եղբայրս էր եւ ոչ թե հանգուցյալ Կորոբչենկոն:

Վերջում նա ասաց .

— Մարդկային կյանքը նման է ոլորապտույտ լեռնային ճանապարհի: Այդ ոլորաններից մեկը ճակատագրական դարձավ պաշտպանյալիս համար:

Եղբորս նորից երեք տարի տվեցին: Այս անգամ արդեն՝ խիստ ռեժիմի:

Դատի օրը Չիտայից ծանրոց ստացա՝ տասը տուփ ճապոնական «Հայ լայթ» սիգարետ . . .

Բորյային ուղարկեցի Օբուխովո: Ինձ գրեց, թե ճամբարը լավ է, պահակները՝ բավականին մարդասեր:

Կապիտան Դերյաբինն իր խոսքի տերը եղավ: Բորյային նշանակեց հաց կտրող: Դա նախանձելի նոմենկլատուրային պաշտոն էր:

Այդ ընթացքում եղբորս կինը հասցրեց ծնել Նատաշային: Մի օր Լիզան զանգեց ինձ .

— Մեզ ընդհանուր տեսակցություն են տվել: Եթե ազատ ես, միասին գնանք: Ծծկեր երեխայի հետ մենակ դժվար կլիներ:

Գնացինք չորսով՝ մորաքույրս, Լիզան, երկու ամսական Նատաշան և ես:

Օգոստոսյան շոգ օր էր: Նատաշան ամբողջ ճանապարհին լալիս էր: Լիզան նյարդայնանում էր: Մորաքրոջս գլխացավը բռնեց...

Մոտեցանք անցակետին: Հետո հայտնվեցինք տեսակցությունների սենյակում: Մեզանից բացի վեց ուրիշ այցելու կար: Կալանավորները բաժանված էին ապակե արգելապատով:

Եղբայրս չէր հայտնվում: Մոտեցա հերթապահին.

— Իսկ ո՞ւր է Դովլաթովը, — հարցրի:

Պատասխանը կոպիտ էր.

— Սպասեք:

Ասացի.

— Զանգիր ավագ հերթապահին ու եղբորս կանչիր: Իսկ Լյոխա Դերյաբինին կասես, քեզ մի լավ չլի:

Հերթապահի փուքսը իջավ.

— Ես Դերյաբինին չեմ ենթարկվում: Ես օպերին եմ ենթարկվում...

— Դու զանգիր,— ասում եմ, — զանգիր...

Այդ պահին հայտնվեց եղբայրս: Ճամբարային գորշ ռոբայով էր: Խուզած մազերը մի քիչ աճել էին: Թխացել էր ու, թերևս, ձգվել:

Մորաքույրս անցքի միջով նրան մեկնեց խնձորները, երշիկն ու շոկոլադը:

Լիզան ասում էր դստերը.

— Տատուսյա, սա քո պապան է: Տեսնում ես՝ պապան է...

Իսկ եղբայրս անընդհատ ինձ էր նայում: Հետո ասաց.

— Գարշելի տաբատ է հագիդ: Գույնն էլ ոնց որ քաքի գույն լինի: Ուզո՞ւմ ես մի հրեայի հետ կապեմ քեզ: Այստեղ զոնայում մի հրեա կա, ցնցող տաբատներ է կարում: Ազգանունն, ի դեպ, Պորանով է: Ի՜նչ զուդիպություն է...

Գոռացի.

— Ի՞նչ ես խոսում: Դա ի՞նչ կապ ունի:

— Մի անհանգստացիր, — շարունակեց նա, — ձրի է լինելու: Ես քեզ փող կտամ, կտորը կառնես, իսկ նա կկարի... Հրեան ասում է՝ «Քամակը մարդու դեմքն է»: Իսկ հիմա քոնին նայիր... Ինչ-որ ծալքեր...

Ինձ թվաց, որ կրկնահանցագործի համար չափազանց պահանջկոտ է...

— Փո՞ղ, — անհանգստացավ մորաքույրս: — Որտեղի՞ց: Ես գիտեմ, որ ճամբարում փող ունենալ չի կարելի:

— Փողը մանրէի պես է, — ասաց Բորիսը, — ամեն տեղ կա: Կոմունիզը կկառցունեք՝ ամեն բան կփոխվի:

— Նայիր, վերջապես երեխայիդ, — աղաչեց Լիզան:

— Նայել եմ, — ասաց եղբայրս, — սքանչելի աղջնակ է . . .

— Սնունդը, — ասում եմ, — այստեղ ինչպե՞ս է:

— Լավ չէ: Ես ճիշտ է, ճաշարանում չեմ ուտում: Արտաժամկետիկներից մեկին ուղարկում եմ խանութ . . . Բայց երբեմն խանութում էլ ոչինչ չի լինում: Ժամը մեկից հետո երշիկ ու ձու չես ճարի . . . Այո . . . Կործանեց Նիկիտան գյուղատնտեսությունը . . . Իսկ ժամանակին ամբողջ Եվրոպան կերակրում էինք . . . Միակ հույսը մասնավոր հատվածն է . . . նէպի վերականգնումը . . .

— Ցածր խոսիր, — ասաց մորաքույրս:

Եղբայրս կանչեց հերթապահին: Կիսաձայն ինչ-որ բան ասաց: Հերթապահը սկսեց արդարանալ: Երկխոսության սոսկ պատառիկներ էին հասնում մեզ:

— Խնդրեցի, չէ՞, — ասում էր եղբայրս:

— Հիշում եմ, — պատասխանում էր հերթապահը, — մի անհանգստացիր: Տոլիկը տասը րոպեից կգա:

— Բայց խնդրել էի, որ տասներկուսն անց կեսին լինի:

— Անհնար էր:

— Դիմա, կնեղանամ:

— Բորյա, դու ինձ գիտես: Ես այնպիսի մարդ եմ, որ խորստացա՝ կանեմ . . . Տոլիկը հինգ րոպեից այստեղ կլինի . . .

— Բայց մենք հիմա ենք ուզում խմել:

Ես հարցրի .

— Ի՞նչ կա: Ի՞նչ է պատահել:

— Մի գործչի օղու եմ ուղարկել՝ գնացել-կորել է . . . Բարդակ է, ոչ թե զինվորական ստորաբաժանում:

— Քեզ կարցերում կնստեցնեն, — ասաց Լիզան:

— Իսկ կարցերում նստողները, կարծում ես, մա՞րդ չեն:

Երեխան նորից սկսեց լալ: Լիզան նեղացավ: Եղբայրս նրան անուշադիր ու անտարբեր թվաց: Մորաքույրս հաբը հաբի հետեւից էր կուլ տալիս:

Տեսակցության ժամանակն ավարտվել էր: Կալանավորներից մեկին գրեթե ուժով տարան: Նա դիմադրում էր ու գոռում .

— Նադկա, բոզություն արիր՝ կսպանեմ: Կգտնեմ ու շանսատակ կանեմ... Չկասկածես... Ու հիշիր, Վովիկը սիրում է քեզ...

— Հարկավոր է գնալ, — ասացի, — ժամանակն է:

Մորաքույրս շրջվեց: Լիզան երեխային էր օրորում:

— Բա օղի՞ն, — ասաց եղբայրս:

— Ինքներդ, — ասում եմ, — հետո կխմեք:

— Ուզում էի քեզ հետ խմել:

— Չարժե, — ասում եմ, — խմելու տրամադրություն չկա:

— Ոնց ոգում ես... Այդ արտաժամկետիկի հոգին, այսպես թե այնպես, հանելու եմ: Ինձ համար մարդու մեջ գլխավորը պատասխանատվությունն է...

Այդ պահին հայտնվեց Տոլիկը: Երևում էր, որ վազել է:

— Ահա, — ասաց, — մանրն էլ՝ մեկ ու երեսուն:

— Լավ, էլ աչքիս չերևաս: Տղերք, — արդեն մեզ դիմեց հերթապահը, Բորյային մեկնելով մի էմալապատ բաժակ:

Եղբայրս անմիջապես լցրեց այն: Բոլորս մի-մի կում խմեցինք: Այդ թվում՝ մյուս կալանավորները, նրանց ազգականները, պահակներն ու արտաժամկետիկները: Հերթապահն էլ...

Մի անթրաշ, դաջվածքներով ծածկված ձեռքերով կալանավոր, բարձրացնելով բաժակն, ասաց.

— Մեր մեծ հայրենիքի կենացը: Անձամբ ընկեր Ստալինի կենացը: Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի կենացը: Բոլոր հրանոթներից՝ կրա՛կ...

— Կեցցե՛ Իմրե Նադի ռեակցիոն վարչախումբը, — ձայնակցեց մեկ այլ կալանավոր...

Հերթապահը դիմեց եղբորս.

— Բոբ, կներես, գնալուդ ժամանակն է...

Միմյանց հրաժեշտ տվինք: Անցքի միջով սեղմեցի եղբորս ձեռքը: Մորաքույրս լուռ նայում էր որդուն: Լիզան անսպասելիորեն հեկեկաց՝ արթնացնելով նոր քնած Նատաշային: Վերջինս նորից սկսեց բարձրաձայն լալ...

Անցավ մոտ մեկ տարի: Եղբայրս գրում էր, որ ամեն բան լավ է: Հաց կտրող էր, իսկ երբ Դերյաբինը թոշակի անցավ՝ էլեկտրիկ էր:

Հետո եղբորս գտավ Ներքին գործերի վարչության ներկայացուցիչը: Որոշվել էր վավերագրական ֆիլմ նկարել ճամբարների մասին: Որ խորհրդային ճամբարները ամենամարդասիրական ճամբարներն են աշխարհում: Ֆիլմը ներքին օգտագործման համար էր լինելու: Վերնագիրը չորոտ էր. «Խիստ ռեժիմի ուղղիչ աշխատանքային ճամբարների պահպանության մեթոդները»:

Եղբայրս շրջում էր ամենահեռավոր ճամբարներով: Նրան «ԳԱԶ-61» էին տրամադրել: Համապատասխան սարքավորում: Նրան անփոփոխ ուղեկցում էին պահակներ Գոդերիձեն ու Օսիպենկոն:

Հաջողացնում էր հաճախ տուն գալ: Մի քանի անգամ ինձ էլ այցելեց:

Ամռանը կինոնկարը պատրաստ էր: Եղբայրս միաժամանակ դրա կինոօպերատորը, ռեժիսորը եւ հաղորդավարն էր:

Հունիսին տեղի ունեցավ անդրանիկ ցուցադրում: Դահլիճում գեներալներ էին հավաքվել ու գնդապետներ: Քննարկման ժամանակ գեներալ Շուրեպովը ասել էր .

— Լավ, պետքական կինոնկար է . . . Նայվում է «Հազար ու մի գիշերի» պես . . .

Բորյան գովասանքի արժանացավ: Սեպտեմբերին նրան պետք է ազատեին:

Վերջապես ես հասկացա, թե որն է եղբորս բնավորության գլխավոր գիծը: Նա ակամա տարերային էկզիստենցիալիստ էր: Գործելու ընդունակ էր միայն ծայրահեղ իրավիճակներում: Կարիերա անել՝ միայն բանտում: Կյանքի համար պայքարել՝ միայն անդունդի եզրին . . .

Եղբորս, վերջապես, ազատեցին:

Հետագան ներկայացնելիս ստիպված եմ կրկնվել: Մորաքույրս զանգեց Յուրի Գերմանին: Եղբորս ընդունեցին վավերագրական ֆիլմերի ստուդիա՝ որպես բանվոր: Երկու ամսից հնչյունային օպերատոր էր: Իսկ կես տարուց՝ մատակարարման բաժնի պետ:

Մոտավորապես նույն օրերին ինձ վերջնակապես հեռացրին աշխատանքից: Պատմվածքներ էի գրում, ապրում էինք մորս թոշակով . . .

Մորաքրոջս պահից հետո իր թղթերում գտանք մոխրագույն աչքերով հմայիչ մի տղամարդու լուսանկար: Դա Կիրովի տեղակալ Ալեքսանդր Ուգարովն էր: Նման էր եղբորս: Թեեւ զգալիորեն ավելի երիտասարդ էր:

Բորյան մինչ այդ էլ գիտեր, թե ով է իր հայրը: Այժմ, սակայն, այդ մասին սկսեցին խոսել բարձրաձայն:

Եղբայրս կարող էր փորձել գտնել իր ազգականներին: Բայց՝ չուզեց: Ասաց .

— Քեզանից բացի ոչ մեկի կարիքը չունեմ...

Հետո լռեց ու ավելացրեց.

— Տարօրինակ է: Ես կիսով չափ ռուս եմ, դու՝ կիսով չափ հրեա: Բայց երկուսս էլ սիրում ենք օղին գարեջրով խմել...

Յոթանասունինը թվականին ես որոշեցի արտագաղթել: Եղբայրս ասաց, որ չի գա: Նորից սկսել էր խմել ու ռեստորաններում կռիվներ սարքել: Նրան ամեն օր կարող էին հեռացնել աշխատանքից:

Իմ կարծիքով, նա կարող էի ապրել միայն կալանավայրում: Ազատության մեջ մի տեսակ թափթփվում էր ու անգամ հիվանդանում:

Վերջին անգամ ասացի նրան.

— Միասին գնանք:

Պատասխանը անկիրք էր ու տխուր.

— Այդ ամենն ինձ համար չէ: Հարկավոր է տարբեր հիմնարկներ գնալ: Բոլորին հավատացնել, թե հրեա ես... Անհարմար եմ զգում... Այ, եթե խմես ու մեկեն հայտնվես Կապիտոլիումի մոտ...

Օդանավակայանում եղբայրս լաց եղավ: Երևի ծերացել էր: Եվ հետո՝ հեռանալը միշտ ավելի հեշտ է, քան մնալը...

Չորրորդ տարին է՝ ապրում եմ Նյու Յորքում: Չորրորդ տարին է՝ ծանրոցներ եմ ուղարկում Լենինգրադ: Եվ հանկարծ՝ փաթեթ այնտեղից:

Փոստատանն էլ բացեցի: Երկնագույն ֆուֆայկա էր օլիմպիական խաղերի խորհրդանշանով: Եվ ծանր մետաղե խցանահան:

Մտածեցի, թե այս կյանքում թարկարժեք ինչ եմ ունեցել: Ու հասկացա, չորս կտոր ռաֆինադ, ճապոնական «Հայ լայթ» սիգարետներ, երկնագույն ֆուֆայկան ու այս խցանահանը...

ԳԼՈՒԽ ՏԱՄՆԵՐՈՐԴ

Տարեցտարի նա ավելի էր նմանվում մարդու: (Ընկերներիցդ ոչ բոլորի մասին կարող ես նույնը ասել): Նրա ներկայությամբ արդեն ամաչում եմ հանվել:

Իմ ընկեր Սեւոստյանովն ասում է .

— Նա ձեր ընտանիքի միակ նորմալ անդամն է . . .

Նրան ափիս մեջ եմ տուն բերել: Տասներկու տարի առաջ էր: Գլաշա անունով ֆոքստերիերի լակոտին: Գույնը կեչու կեղեւ է հիշեցնում: Քիթը՝ բոնցքամարտիկի փոքրիկ ձեռնքոց . . .

Կարճ ասած՝ Գլաշան հմայիչ էր:

Մինչեւ մի տարեկանը նորմալ, շարքային շուն էր: Կծոտում էր մեր կոշիկները: Ուտելիք էր մուրում:

Նրա դաստիարակությամբ գրեթե չէինք զբաղվում: Կերակրում էինք ինչով պատահի: Առավոտյան ու երեկոյան տասը րոպեով դուրս էինք տանում:

Ոչ մի «Թաթդ տուր», ոչ մի «Տաբու», ոչ մի «Ֆաս»:

Փոխարենը հետը զրուցում էինք: Ես էլ, մայրս էլ, կինս էլ: Իսկ հետո նաեւ դուստրս, երբ ինքը խոսել սովորեց . . .

Գլաշան տասներեք ամսական էր, երբ հայտնվեց ոմն Բոբրով:

Բանասիրականում միասին էինք սովորել: Ինձ վոնդել էին, իսկ Լյոշան բարեհաջող ավարտել էր համալսարանը:

Միանգամայն առողջ ու նույնիսկ լկտի պատանի էր: Սիրահետում էր աղջիկներին, կռիվներ էր սարքում, խմում էր:

Հետո ամուսնացավ: Կնոջը անվանում էր Ֆիլի (անգլերեն նշանակում է զաբմիկ):

Մեկ տարի աշխատեց «Ինտուրիստ»-ում:

Հետո համակվեց հոռետեսությամբ: Բոբրովը անտառապահ դարձավ Պոդպորոժյեյի շրջանում: Բնակվեց անտառում, ինչպես Հենրի Տորոն: Որսորդություն էր անում, սունկ պահածոյացնում, կառուցել ու լարված շահագործում էր օդի թորելու սարքը: Երբեմն երեւում էր Լենինգրադում: Մի օր մտավ ինձ մոտ: Տեսավ շանն ու ասաց .

— Ախր սա որսի շուն է: Իսկ դու պուդել ես դարձրել . . . Տուր ինձ, տանեմ որսորդական տնտեսություն: Մեկ-երկու ամսից կվերադարձնեմ:

Մտածիցինք՝ իսկ ինչո՞ւ ոչ: Թող շունը զարգացնի իր բնազդները...

Անցավ երկու ամիս, երեք, չորս... Բոբրովը չէր երեում: Նամակ գրեցի: Չպատասխանեց: Մայրս անդադար կրկնում էր.

— Տխուր է առանց Գլաշայի:

Դուստրս մի քանի անգամ լաց եղավ:

Ի վերջո, կինս ասաց.

— Գնա շանը հետ բեր:

Հետս եկավ մեր բարեկամ Վալերի Գրուբինը:

Երեկոյան յոթին Պոդպորոժյեյում էինք: Մինչև Ռովսկոյե կոչվող որսորդական տնտեսությունը երեսուն կիլոմետր էր: Փոխադրամիջոց չկար: Ճանապարհ էլ չկար, հարկավոր էր գնալ Ավիր գետի սառած հունով:

Չգիտեինք ինչ անենք:

Մի հարբեցող խորհուրդ տվեց.

— Երեք ռուբլով սահնակ վարձեք:

Այդպես էլ արեցինք: Երկու տղա համաձայնեցին տեղ հասցնել: Ամբողջ ճանապարհին լուռ էինք: Ձին զգուշությամբ առաջ էր շարժվում սառույցի վրայով: Տղաներին խոսեցնելու փորձերը ապարդյուն անցան:

Գրուբինը նրանցից մեկին հարցրեց.

— Հայրիկն ու մայրիկը կոլխոզո՞ւմ են աշխատում:

Տղան երկար լռեց: Հետո բազմանշանակ ու մշուշոտ պատասխանեց.

— Է՛խ... Լողացին պղտոր ջրերը խորքերում...

Վերջապես ձին կանգ առավ:

— Այս բլրակի վրա էլ կլինի Ռովսկոյեն...

Վճարեցինք ու քայլեցինք բլրակն ի վեր: Մթության միջից հեռվից լսվում էր.

— Դե-հա, անտեր, ո՞ւմ եմ ասում...

Արդեն բոլորովին մութ էր: Ոչ լույս էր երևում շուրջը, ոչ ձայն լսվում: Քայլեցինք գետի երկայնքով: Հանկարծ Գրուբինն անհետացավ:

— Ո՞ւր ես:

Պատասխանը գետնի տակից եկավ.

— Այստեղ . . . Ջրհորն ընկա:

Գնացի ձայնի ուղղությամբ: Հասա մի քառակուսի սեւ անցքի: Պառկեցի ձյան վրա ու զգուշությամբ ցած նայեցի:

Փոսի հատակում լույս էր առկայծում: Գրուբինը սիգարետ էր վառում:

— Այստեղ խոնավ է, — բողոքեց:

Հետ սողացի: Մի երեք մետրանոց ճյուղ ընտրեցի: Մի քանի ժամի չափ կացնով քրքրեցի: Ստացվեց ձողի պես մի բան: Դուրս հանեցի ընկերոջս:

Գրուբինը շնորհակալություն հայտնեց ու ասաց .

— Լուցկին այստեղ թողեցի . . .

Ռովսկոյե հասանք արդեն առավոտյան: Պարզվեց, լակոտները չորս կիլոմետր հեռու էինք իջեցրել մեզ . . .

Օ՛, Նեկրասովի գովերգած գեղջուկ երեխաներ: Ինչպե՞ս եք փոխվել: Այսօրվանից ու առհավետ կոչում եմ ձեզ կոլխոզի զավակներ . . .

Լյոշա Բոբրովը երկչոտ ժպիտը դեմքին կանգնած էր շեմին: Նիհարած Գլաշան կլանչոցով դեպի ինձ վազեց:

— Սառե՞լ եք, — հարցրեց Բոբրովը, — Խմել ուզո՞ւմ եք . . . .

Որքան էլ չարացած լինի ռուս մարդը, խմել առաջարկիր՝ անմիջապես կբարիանա . . .

Սեղանի շուրջ Լյոշան պատմեց .

— Երկու անգամ եկել եմ Լենինգրադ: Ուզում էի վերադարձնել Գլաշային՝ չկարողացա: Կապվել եմ . . .

Իմացանք, որ Գլաշան մի քանի սխրանքներ է գործել: Նախ՝ փրկել է խեղդվող շան լակոտի: Դուրս է քաշել ջրափոսից: Բացի դրանից՝ առաջինն է գտել արջի հետքը: Եվ վերջապես՝ աղվես է խեղդել:

Ինձ համար տհաճ էր, որ Գլաշան կենդանի էակ է սպանել: Բայց ինչ արած՝ բնազդ է . . .

Այստեղ հիշեցի մի հին պատմություն: Ընկերոջս հետ ճաշում էինք «Բալթիկա» ռեստորանում: Ջրույցի բռնվեցինք մատուցողուհու հետ: Կոնյակ հյուրասիրեցինք: Ջուտ ընկերական՝ առանց հետին մտքերի: Իսկ նա շատ տարօրինակ պահեց իրեն: Վեց ռուբլի ավելի հաշվեց:

Անկեղծ ասած, մի փոքր շփոթվեցի: Բնականաբար, փողը չէի ափսոսում, վիրավորական էր պարզապես: Իսկ ընկերս ասաց.

— Զարմանալու ի՞նչ կա: Սոխակը որ կլկլացնում է, հո ուրախությունից չէ՞: Այլ կերպ չի կարող... Սոխակը երգում է, մատուցողը գողանում է... Այլ կերպ պարզապես չի կարող... Բնույթն է այդպիսին, բնազդ է...

— Ծախիր շանը, — ասաց Բոբրովը:

— Չես ամաչո՞ւմ:

— Ուրեմն նվիրիր: Նրա համար այստեղ ավելի լավ է:

— Շան համար՝ գուցե: Բա մե՞նք...

Մի քիչ էլ խմեցինք ու պառկեցինք քնելու:

Արթնացանք ճաշին: Սենյակում չորս անծանոթ տղամարդ կար:

Լյոշան ինձ մի կողմ տարավ.

— Այս տղաները ՊԱԿ-ից են: Վաղը եղջերուի որսի են գնալու:

— Եղջերուն ի՞նչ մեղք ունի, — ասում եմ: — Մենք իրենց այլևս չե՞նք բավարարում:

— Նորմալ տղերք են, — շշուկով ասաց Բոբրովը, — աշխատանքից հետո շատ են փոխվում:

— Ո՞ր ուղղությամբ:

Օրգանները ներկայացնող տղաները կուռ տեսք ունեին: Ինչ-որ ընդհանուր, տիպական բան կար: Մերիական, ողորկ դեմք, կոկիկ սանրվածք, բրդե հագուստ: Մեկը նստեց իմ կողքին: Խոսքը հստակ էր ու հատու.

— Ձե՞ր շունն է... Լավ է... Անունն ի՞նչ է... Գլաֆի՞րա: Կատակո՞ւմ եք: Գնահատում եմ... Կտղուցը ե՞րբ է եղել: Չգիտե՞ք: Իսկ ո՞վ պիտի իմանա... Ականջները թարախակալո՞ւմ են: Ո՞չ... Շատ լավ է...

— Եկեք ճաշելու, — հրավիրեց Բոբրովը:

Ճաշեցինք անշտապ: Օրգանի տղաները օղի հանեցին: Ջրույցը հաճախ նուրբ ու վտանգավոր բնույթ էր ստանում:

— Ազատությո՞ւն, — ասում էր նրանցից մեկը: — Ռուս մարդուն ազատություն տվեցիր՝ առաջին հերթին զոքանչին կմորթի...

Հարցրի.

— Միշա Խեյֆիցին ինչո՞ւ նստեցրին: Ուրիշներն արտասահմանում անգամ տպագրվում են: Իսկ Խեյֆիցը իր գործը չի էլ հրատարակել:

— Եվ իզուր չի հրատարակել, — պատասխանեց երկրորդը, — Այդ դեպքում չէին նստեցնի: Իսկ այսպես՝ ո՞ւմ է պետք ձեր Խեյֆիցը . . .

— Սախարովը միամիտ երեխայի պես է դատում, — ասում էր երրորդը, — նրա գաղափարները չբեր են: Թվում է թե գրագետ են շարադրված, սակայն՝ մի մեծ վերապահությամբ: Սախարովի առաջարկածը հնարավոր է միայն մի պայմանով: Եթե ձերբակալվի Կենտկոմի քաղբյուրոն . . .

— Հարց չկա, — ասաց Վալերի Գրուբինը:

— Մենք պետք է գնանք, — ասացի, — շնորհակալություն:

Հավաքեցինք իրերը: Բոբրովը հրաժեշտ տվեց Գլաշային: Նրա կինը՝ Ֆիլինը (իսկական անունը մոռացել եմ) նույնիսկ անձայն արտասվեց:

Արդեն շարժվում էինք: Օրգանի տղաները կանգնած էին դռան մոտ:

— Ժամանակ ունենաք՝ եկեք մեզ մոտ, — ասաց նրանցից մեկը, — սքանչելի թանգարան ունենք: Նեղ շրջանակի համար, իհարկե: Բայց ես կդասավորեմ: հասցեն, հեռախոսահամարը թողել եմ:

— Դուք էլ եկեք, — ասացի:

— Միայն թե՝ օրդերով, — ավելացրեց Գրուբինը:

Չեկիստը սեւեռուն նայեց ընկերոջս ու ասաց .

— Օրդերը խնդիր չէ . . .

Հրաժեշտ տվինք ու քայլեցինք գետի երկայնքով: Գլաշան վազում էր առանց հետ նայելու:

— Հետաքրքիր է, — ասում եմ, — դրանք թանգարանում ի՞նչ կա:

— Սատանան գիտի, — պատասխանեց Գրուբինը: — Երեւի Բուխարինի եղունգները . . . .

Երկու տարուց տեղափոխվեցի Տալլին: Գլաշային հետս տարա: Շուտով նա հերթական սխրանքը գործեց:

Գործուղման էի մեկնել կղզիներ: Այդ ընթացքում շանը ընկերներիս մոտ էի թողել: Նրանց բնակարանում վառարան կար: Մի օր վառում են վառարանը: Ծխնելույզը ժամանակից շուտ են փակում: Ամբողջ ընտանիքով պառկում-քնում են:

Բնակարանը լսվում է հեղձուցիչ ծխով: Բոլորն արդեն քնած են լինում:

Գլաշան, սակայն, արթնանում է ու գործում է շատ խելամիտ:

Մոտենում է տանտիրոջ մահճակալին ու քաշում վերմակը: Տանտերը հողաթափը շպրտում է Գլաշայի վրա, նորից ծածկվում: Գլաշան կրկին քաշում է վերմակը ու այս անգամ հաչում:

Վերջապես երկոտանիները հասկանում են, թե ինչ է կատարվում: Բացում են դռները, դուրս վազում փողոց... Գլաշան երկար ժամանակ փսխում է:

Հաջորդ օրը նրա համար Կենտկոմի բուֆետից չորս հարյուր գրամ ֆիլե են բերում: Եզակի դեպք էր: Թերևս առաջին անգամ կուսակցական արտոնությունները հասնում են արժանավորին:

Տալլինում սկսեցի մտածել Գլաշայի ամուսնության մասին: Զանգեցի ծանոթ կինոլոգի: Մի քանի հասցե ու հեռախոս տվեց:

Շանս ազնվական ծագումը որոշակի բծախնդրություն էր պահանջում: Ընտրեցի Ռեզո անունով որձի: Վրացական անունը մարմնական զորություն ու զգացմունքների փոթորիկ էր խոստանում: Առավել ևս, որ Ռեզոյի տիրուհին մեր հարևանությամբ գտնվող էստոնական թերթի խմբագրությունից էր՝ սիրունատես Անեչկա Պայուն:

Սիրո գործողությունը տեղի պիտի ունենար ձիարշավարանի հարևանությամբ ընկած ամայի տարածքում:

Ռեզոն հրաշալի տեսք ուներ: Շիկամազ մկանոտ շուն էր՝ լկտի աչքերով: Նյարդայնացած դողդողում էր ու կլանչում:

Անյան կարճ վերարկուով էր ու լաքե երկարաճիտ կոշիկներով: Շանս անմիջապես սիրեց.

— Հրաշք է, — բացականչեց նա, ավելացնելով սակայն. — Շատ նիհար է...

Կարծես կասկած հայտնելով, թե նման հարսից հազիվ թե օգուտ լինի:

— Հիմա մոդայիկ է նիհար լինելը, — ասացի:

Անյան իր կլորիկ հետույքի շարժումով վիճարկեց պնդումս:

Փոխանակեցինք փաստաթղթերը: Գլաշայի տոհմածառը, կրկնում եմ, շատ ավելի պատկառելի էր, քան իմ ընկեր Վոլոդյա Տրուբեցկոյինը: Ռեզոյի փաստաթղթերն էլ կարգին էին:

— Դե լավ, — հոգոցով ասաց Անյան ու արձակեց շանը: Ես էլ Գլաֆիրային բաց թողեցի:

Արևոտ ձմեռային օր էր: Ձյան վրա ստվերները վարդագույն երանգ ունեին: Ազատություն ստացած Ռեզոն գլուխը կորցրեց:

Հաչալով երեք մեծ շրջան կատարեց: Գլաշան հազիվ նշմարվող հետաքրքրությամբ հետեւում էր:

Վազելուց հետո Ռեզոն թավալվեց ձյան մեջ: Երեւի՝ կրքի բռնկումը մի փոքր սառեցնելու: Կամ՝ ցուցադրելու, թե ինչ գնով է իրեն ետ պահում անխելամիտ արարքից:

Հետո իրեն թափ տվեց ու վազեց մեր ուղղությամբ: Գլաշայի շուրջը: Թվում էր, թե Ռեզոն մեր աչքի առաջ մեծանում է: Ու ինչ-որ բան է գոմռում ինքն իրեն: Ինձ թվաց, թե լսեցի .

— Վայ, էս ի՜նչ աղջիկ է: Չինար բոյով . . . Լուսաբացի պես անարատ . . . Ռեստորան կգնանք: Խորոված կուտենք: Խվանչկարա կխմենք . . .

Գլաշայի պոչիկը սեթեւեթ ցնցվեց: Նա մի քայլ արեց դեպի Ռեզոն, դիպչելով վերջինիս ուսին:

Եվ այստեղ տեղի ունեցավ անսպասելին: Ռեզոն կլանչելով փախավ: Իսկ հետո հպվեց տիրուհու լաքած երկարաճիշտ կոշիկներին:

Գլաշան արհամարհանքով շրջվեց:

Ռեզոն դողդողում ու կլանչում էր:

— Դե, ի՞նչ եղավ քեզ: Ի՞նչ եղավ, — հանգստացնում էր նրան Անյան: — Քեզ տղամարդու պես պահիր:

Ռեզոն, սակայն, սոսկ դողում ու կլանչում էր:

Կրքոտ շարժուձեւով իմպոտենտ էր այդ սանձարձակ կացոն: Այդ տեսակը բավական տարածված է հասուն տարիքի կովկասցիների շրջանում:

Անեչկան անհարմար էր զգում իր շան համար: Անգամ ուզեց ինչ-որ կերպ փոխհատուցել Ռեզոյի անհաջողությունը: Հրաժեշտ տալիս շշնջաց .

— Կալյուն Մինսկ է գնալու՝ սեմինարի: Ես քեզ կզանգեմ շաբաթվա վերջին:

Անյան, իրոք, զանգեց, սակայն անզուսպ Տատյանան ամենավերջին խոսքերով հայհոյեց նրան . . .

Երբ ինձ վոնդում էին խմբագրությունից, Անյան պատրաստակամություն էր հայտնել ֆելիետոն գրել էստոնական թերթի համար: Արդեն վերնագիր էր հորինել՝ «Սեւ ակնոցով»: Այն առումով, որ ես զրպարտիչ եմ ու ամեն լուսավոր բան սևացնող:

Կենտկոմի ծանոթ մի հրահանգչի բավական մեծ ջանքերի գնով հաջողվեց խոչընդոտել դրան:

Վերադառնանք, սակայն, շանս: Երեք անգամ փորձեցի ամուսնացնել: Երեք անգամն էլ անհաջող:

Երկրորդ փեսացուն մուժիկի պես ջլոտ էր ու ուժեղ: Գավառական ֆիզկուլտուրայի ուսուցչի էր հիշեցնում: Ինչ-որ բանով նման էր Արկադի Լվովին:

Որոշեց ժամանակ չվատնել սիրախաղի վրա: Անմիջապես, ինչպես անում են, գործի անցնել:

Գլաշան մի լավ կծոտեց նրան:

Այդպես էլ հեռացավ ձեռնունայն: Ուրախ ու բարդույթներից զերծ արարած էր...

Ինչո՞ւ Գլաշան մերժեց նրան...

Մի քիչ ռոմանտիկան, հավանաբար, բոլոր դեպքերում անհրաժեշտ է...

Երրորդ փեսացուն անդադար քորում էր իրեն: Բացի այդ, հիվանդ միզապարկ ուներ: Բուրդն էլ կեղտոտ էր ու տեղ-տեղ թափած: Իսկ տոհմածառը, նայել էի՝ բացառիկ էր: Ուրեմն այլասերման ծնունդ էր: Ինչպես Վոլոդյա Տրուբեցկոյը:

Գլաշան նրան պարզապես բանի տեղ չդրեց:

Այդպես էլ կույս մնաց: Հետո արդեն ուշ էր: Ծանոթ կինոլոգը ասաց.

— Իսկ եթե չկարողանա ծննդաբերե՞լ... Մենք կարող ենք վտանգել մեր սեփական կայնքը: Պարկեշտ մարդիկ ուրիշի կյանքը չեն վտանգում...

Հիմա Գլաֆիրան տասներկու տարեկան է:

Մենք ծանոթ ենք տասներկու տարի:

Տասներկու տարի մեր ընտանիքը ցնցում են պառակտումներն ու ամեն կարգի արհավիրքները:

Անվերջ կռվում ու բաժանվում էինք: Ընտանիքն, ինչպես ասում են, փլուզվում էր: Եվ անգամ կողքից նոր ընտանիքներ էին գոյանում: Միայն Գլաշան էր շարունակում մոտ ու հարազատ մնալ: Եվ բոլորիս սիրում էր հավասարապես:

Հիմա Գլաշան քնած է ոտքերիս մոտ: Երբեմն հազիվ լսելի տնքում է: Գուցե երազում հայրենիքն է տեսնում: Օրինակ, էժանագին ձկան պահածո: Կամ Շչերբակովի նրբանցքի պուրակը . . .

Մի տխրիր, ամեն բան կկարգավորվի:

Ու ներիր, որ պոչ չունեմ: (Սովետում ունեի, այն էլ՝ մի քանիսը): Ներիր, որ ունեմ կոշիկներ, ծխախոտ ու Ֆոլքների պատմվածքները:

Մնացած ամեն ինչով նման ենք իրար: Հասուն տարիքի նյարդային օտարերկրացիներ՝ բարդույթներով . . . Միասին երշիկ ենք թոցնում սառնարանից . . .